# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՑՏՆ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 41 - 42 (16538) ՇԱԲԱԹ, 27 ՄԱՅԻՍԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

# ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԵՍ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԵՐԿՐԻՑ ԵՄ» ԿԱՐԳԱԽՈՍՈՎ




*Մայիսի 26-ին, Վրաստանի պետական անկախության օրը, ի նշանավորում Շոթա Ռուսթավելու ծննդյան 850-ամյակի, անցկացվեց համաժողովրդական հանդիսություն «Ես Ռուսթավելու երկրից եմ» կարգախոսով: Անկախության տոնին նվիրված միջոցառումներ ընթացան ինչպես Թբիլիսիում, այնպես էլ՝ երկրի մյուս քաղաքներում՝ Բաթումիում, Քութայիսիում, Ախալքալաքիում, Նինոծմինդայում, Ախալցիխեում եւ այլ քաղաքներում:*

Թբիլիսիում, Ազատության հրապարակում, Անկախության տոնին նվիրված հանդիսությունները սկսվեցին պետական օրհներգով եւ հայրենիքի անկախության համար զոհվածների հիշատակի հարգանք՝ մեկ րոպես լռությամբ:

Ապա անցկացվեց 400 նորակոչիկների երդման արարողությունը:

Միջոցառման մասնակիցներին խոսքով դիմեցին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, պաշտպանության նախարար Լեւան Իզորիան:

Երկրի առաջին դեմքերի ելույթներում առանձնակի ընդգծվեց նաեւ Վրաստանի անկախ պետականության կառուցման գործում երկրի բազմազգ բնակչության ակտիվ ներգրավումը:

Միջոցառմանը ներկա էին Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը, Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, երկրի կառավարության եւ խորհրդարանի անդամներ, Վրաստանում

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

## ՆԱՏՕ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԸ ԹՎՈՎ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԱԼՅԱՆՍԻ ՈՉ ԱՆԴԱՄ ԵՐԿԻՐՆ Է, ՈՐՏԵՂ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է ՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ



*Մայիսի 26-ին Թբիլիսիում աշխատանքը սկսեց ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովը:*

Ալյանսի գարնանային նիստի աշխատանքին մասնակցում են ՆԱՏՕ-ի 28 անդամ երկրների, ինչպես նաեւ ալյանսի գործընկեր երկրների ավելի քան 600 պատգամավորներ: Վերջին 15 տարիների ընթացքում Վրաստանը ալյանսի ոչ անդամ երկրներից առաջինն է, որտեղ անց է կացվում նման միջոցառումը: Ընդ որում, մինչեւ 2002 թվականը ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողով անցկացվել է ալյանսի ոչ անդամ չորս երկրներում, որոնք ժամանակի ընթացքում դարձան ՆԱՏՕ-ի լիարժեք անդամներ:

Խորհրդարանական վեհաժողովում վրացական պատվիրակությունը գլխավորում է Օրենսդիր մարմնի պաշտպանության եւ անվտանգության կոմիտեի նախագահ Իրակլի Սեսիաշվիլին:

Աշխատանքի առաջին օրն անցկացվեց վեհաժողովի մասնակիցների համատեղ մամլո ասուլիս, ապա՝ գումարվեց Վրաստան-ՆԱՏՕ միջխորհրդարանական խորհրդի փակ նիստը: Անցկացվեցին երկկողմ եւ բազմակողմ մի շարք հանդիպումներ:

Վեհաժողովի աշխատանքի երկրորդ եւ երրորդ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՄՆ ԴԵՐՆ ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ Է»

*Մայիսի 23-ին անցկացվեց ամերիկա-վրացական բիզնես խորհրդի հիմնման 20-ամյակին նվիրված խորհրդաժողով, որի աշխատանքին մասնակցեց Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:*




Հանդես գալով խորհրդաժողովում, վարչապետը նշեց, որ Վրաստանի զարգացման գործում ԱՄՆ դերն անգնահատելի է: Անդրադառնալով բիզնես խորհրդի գործունեությանը, Վրաստանի վարչապետը նշեց, որ այն նշանակալի դեր է կատարել Վրաստանի եւ ԱՄՆ միջեւ ոչ միայն տնտեսական, այլեւ՝ քաղաքական փոխ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՄԵՆՔ ԿՍՏԱՆԱՆՔ ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ»



*Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, չնայած Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Թոմաս Մարկերտի կողմից կոնսենսուսի կարեւորության մասին արված հայտարարությանը, համարում է, որ Սահմանադրության նախագծի հետ կապված Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունը դրական կլինի:*

Բեռլինում տեղի ունեցավ գիտաժողով, որի ընթացքում քննարկվել է Վրաստանի Սահմանադրության նախագիծը՝ Վենետիկի հանձնաժողովի կողմից: Վենետիկի հանձնաժողովի քարտուղար Թոմաս Մարկերտը գիտաժողովի ժամանակ հայտարարել է, որ անհրաժեշտ է հասնել կոնսենսուսի՝ Սահմանադրու-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՄԵՐՁԵՑՄԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

*Մայիսի 23-ին, աշխատանքային այցով Վրաստանում գտնվող Եվրախորհրդարանի արտաքին կապերի կոմիտեի անդամները, Վրաստանի օրենսդիր մարմնի պատգամավորների հետ կայացած հանդիպմանը քննարկեցին Վրաստանի եւ Եվրամիության մերձեցման, ինչպես նաեւ անայցեգրային պայմանակարգի հաստատման հետ առնչվող հարցեր:*



Եվրախորհրդարանի արտաքին գործերի կոմիտեի նախագահ Դեւիդ Մաքալիստերի գլխավորած պատվիրակության անդամները հանդիպում ունեցան ինչպես խորհրդարանի մեծամասնության, այնպես էլ՝ փոքրամասնության ներկայացուցիչների, ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչների հետ:

Եվրախորհրդարանի պատվիրակության եւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու հանդիպմանը քննարկվեցին Եվրամիության հետ Վրաստանի ինտեգրման խորացման հնարավորությունները:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԽՈՐԱՑՄԱՆԸ

*Վրաց-հայկական դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյակի կապակցությամբ, Հայաստանի Վանաձոր քաղաքում, «Կովկասյան Գործընկերության» հերթական նախաձեռնությամբ, անցկացվեց «Հայաստանն ու Վրաստանը 21-րդ դարում. ընդհանուր մարտահրավերներն ու համագործակցության հետագա խորացման հեռանկարները» խորագրով կլոր սեղան-քննարկումը:*



Միջոցառման հիմնական նպատակներից մեկը՝ երկու երկրների փորձագիտական ու հասարակական հանրության միջեւ համագործակցության ամրապնդմանը նպաստելն է:

Միջոցառումը բացեց «Կովկասյան Գործընկերության» նախագահ, 2011-14թթ. Վրաստանում Հայաստանի արտաքին եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը: Նրա խոսքով, երկու պետությունների հարաբերություններին առնչվող խնդիրներ գրեթե չկան, որոնք այսօր լուծելի չեն որեւէ մակարդակում: Սակայն, ժամանակակից մարտահրավերներն այսօր բավական շատ են, եւ երկխոսությունը մեր հարեւանների հետ պետք է լինի մշտական, որպեսզի կարողանանք միասին կարգավորել տարածաշրջանում առ-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ԱՄՆ



## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԲԱՐՁՐ Է ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՄՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»

*Մայիսի 24-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ աշխատանքային այցով Թբիլիսիում գտնվող Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի տեղակալի օգնական Բրիջիթ Բրինկի հետ:*

Հանդիպմանը երկրի նախագահին ընդգծեց, որ Վրաստանը բարձր է գնահատում այն աջակցությունը, որը Ամերիկայի Միացյալ Նահանգները ցուցաբերում է երկրին, նրա ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության հարցերում:

Հանդիպմանը քննարկվեցին Վրաստան-ԱՄՆ երկկողմ եւ բազմակողմ համագործակցության հնարավորությունները: Գիորգի Մարգվելաշվիլին ԱՄՆ-ին շնորհակալություն հայտնեց երկրի ամբողջականության պաշտպանության համար, եւ առանձնակի ընդգծեց այն որոշման նշանակությունը, որն այդ ուղղությամբ ընդունել է Դոնալդ Թրամփի վարչակազմը:

Նշենք, որ ԱՄՆ պետդեպարտամենտի պատվիրակությունը Թբիլիսիում հանդիպումներ է անցկացրել Վրաստանի խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեի, խորհրդարանի մեծամասնության եւ փոքրամասնության ներկայացուցիչների հետ:

## ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԱՄՆ ԴԵՐՆ ԱՆԳՆԱՀԱՏԵԼԻ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հարաբերությունների զարգացման ու խորացման գործում: Գիորգի Կվիրիկաշվիլին հիշեցրեց նաեւ, որ այս տարի նշվում է երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 25-ամյա հոբելյանը, եւ այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ը մշտապես Վրաստանին աջակցություն է ցուցաբերել ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության հարցերում:

Ինչպես հայտարարեց վարչապետը, երկրում իրականացված բարեփոխումների եւ Վրաստանի «բռնազավթման» գործոնի հաշվառմամբ, Վրաստանը դեռեւս զգում է իր ռազմավարական գործընկերների, եւ, առաջին հերթին, ԱՄՆաջակցության կարիքը, միաժամանակ հանդիսանալով այն երկիրը, որն ամերիկյան ընկերություններին հնարավորություն է ընձեռում ընդլայնել գործունեության մասշտաբները ողջ տարածաշրջանում: Որպես նման հնարավորության օրինակ, վարչապետը նշեց Չինաստանի կողմից նախաձեռնած «Մի գոտի՝ մի ուղի» ծրագիրը, որի շրջանակներում հիմնվում է Մետաքսե նոր ճանապարհը: «Ելնելով դրանից, մենք ցանկանում ենք ամրացնել Վրաստանի վարկանիշը որպես կայուն, հուսալի սկզբունքների վրա հիմնված եւ գործընկերներին հավատարիմ երկիր»,- հայտարարեց Գիորգի Կվիրիկաշվիլին:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ՀՈՐԴԱՆԱՆՈՒՄ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ

*Մայիսի 20-21-ը, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին մասնակցեց Հորդանանում անցկացված «Մերձավոր Արեւելքի եւ Հյուսիսային եւ Արեւելյան Աֆրիկայի համաշխարհային ու տնտեսական գագաթաժողով-2017»-ին:*



Հանդես գալով գագաթաժողովին, Վրաստանի վարչապետը մանրամասն խոսեց երկրում իրականացվող բարեփոխումների, ներդրումների խրախուսմանն ուղղված հարկային օրենսգրքի փոփոխությունների, եվրաինտեգրման ուղղությամբ իրականացվող կոնկրետ միջոցառումների մասին:

Այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպումներ ունեցավ Հորդանանի թագավոր Աբդուլա Երկրորդի, վարչապետ ու պաշտպանության նախարար Հանի Ալ Մուլիքի հետ: Վերոնշյալ հանդիպումների արդյունքներով, Վրաստանի եւ Հորդանանի կառավարությունների միջեւ ստորագրվեց զբոսաշրջության ոլորտում համագործակցության համաձայնագիր:

Հորդանանում, աշխատանքային այցի շրջանակներում, Վրաստանի վարչապետը հանդիպում ունեցավ նաեւ Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինիի, Նորվեգիայի ԱԳ նախարար Բերկ Բրենդիի եւ համաշխարհային տնտեսական գագաթաժողովի հիմնադիր, պրոֆեսոր Կլաուս Շվաբի հետ:

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

## ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԵՍ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ԵՐԿՐԻՑ ԵՄ» ԿԱՐԳԱԽՈՍՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, Թբիլիսիում անցկացվող ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նստաշրջանի մասնակիցներ:

Վրաստանի պետական անկախության 99-րդ տարելիցի կապակցությամբ, Ռուսթավելու պողոտայում ցուցադրվեց ռազմական տեխնիկա, տեղադրվել էին առանձին տաղավարներ, անցկացվեցին երաժշտական-թատերական ներկայացումներ, կազմակերպվեցին վրացական արտադրության ապրանքների տոնավաճառներ, վրաց նկարիչների գործերի աճուրդներ: Քանի որ ընթացիկ տարվա անկախության տոնը անցկացվում է «Ես Ռուսթավելու երկրից եմ»՝ ի նշանավորում Շոթա Ռուսթավելու ծննդյան 850-ամյակի, Ռուսթավելու պողոտայում կազմակերպվեց «Ընձենավորի» բացառիկ հրատարակությունների հայտնի հավաքածուի ցուցադրումը:

Օրվա վերջին, Թբիլիսիի Վարդերի հրապարակում անցկացվեց գալա-համերգ:

Վրաստանի ինքնակառավարման քաղաքներում եւս անցկացվեցին համերգներ, տոնական այլ միջոցառումներ:

Նշենք, որ Վրաստանի պետական անկախության օրվան նվիրված միջոցառումների կազմակերպմանը ներգրավվել էին ինչպես պետական, այնպես էլ՝ մասնավոր հատվածի ներկայացուցիչներ՝ շուրջ 80 գործարարներ եւ մոտ 30 վրացական ու միջազգային ընկերություններ:

ՎՐԱՍՏԱՆ - ՆԱՏՕ

## ՆԱՏՕ-Ի ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

օրը ծրագրված է անցկացնել պաշտպանության եւ անվտանգության, էկոնոմիկայի եւ անվտանգության, քաղաքականության եւ այլ կոմիտեների նիստերը: Կոմիտեների նիստերում օրակարգում ընդգրկվել են Եվրամիության, Վրաստանի հետ ալյանսի համագործակցության, ահաբեկչության դեմ պայքարի, Աֆղանստանի իրավիճակի, Սեւծովյան տարածաշրջանում անվտանգության հիմնախնդիրներին առնչվող հարցեր: Վրացական կողմից զեկուցումներով հանդես են գալու պաշտպանության նախարար Լեւան Իզորիան, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Վլադիմիր Չաչիբաիան, փորձագետ Կախա Գոգոլաշվիլին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, «Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ոչ կառավարական կազմակերպության նախագահ Աննա Նացվլիշվիլին, Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն եւ Վրաստանի արտաքին գերատեսչության նախկին ղեկավար Իրակլի Մենաղարիշվիլին:

Նստաշրջանի լիագումար նիստը կանցկացվի մայիսի 29-ին: Այդ օրը միջոցառման մասնակիցներին կդիմեն Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, ինչպես նաեւ՝ որպես հատուկ հյուր հրավիրված ՆԱՏՕ գլխավոր քարտուղարի տեղակալ Ռոուզ Գետեմյուլլերը եւ Ուկրաինայի գերագույն Ռադայի նախագահ Անդրեյ Պարուբին:

Լիագումար նիստի ավարտին նախատեսված է եվրատլանտյան ինտեգրման հարցում Վրաստանի աջակցության հռչակագրի ընդունումը:

Վրաստանը ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի ասոցիացված անդամ է դարձել 1999 թվականի մայիսից:



ԻՐԱՆ

### ՌՈՈՒՀԱՆԻՆ՝ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀ

*Իրանի Իսլամական Հանրապետության գործող նախագահ Հասան Ռոուհանին վերընտրվել է երկրի նախագահի պաշտոնում՝ հավաքելով ձայների 57 տոկոսը:*

*Իրանի նախագահի պաշտոնին հավակնում էին չորս թեկնածու՝ Ռոուհանին, այաթոլլահ Իբրահիմ Ռաիսին, նախկին փոխնախագահ Մոստաֆա Հաշեմի-Թաբան եւ պահպանողականների թեկնածու Մոստաֆա Աղա-Միրսալիմը:*

*Իրանի նախագահի ընտրությունները տեղի էին ունեցել մայիսի 19-ին: Ընտրություններին մասնակցել է՝ ընտրելու իրավունք ունեցող 56 մլն քաղաքացիների շուրջ 70 տոկոսը:*

*Նախագահական ընտրություններին զուգահեռ, անցկացվել են նաեւ քաղաքային խորհուրդների ընտրություններ:*

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

### ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՉԵՍԹԵՐՈՒՄ

*Անգլիայի Մանչեսթեր քաղաքի ծածկած մարզադաշտում մայիսի 22-ին պայթյունը որոտացել է տեղական ժամանակով ժամը 22:35-ին: Այդ րոպեներին ավարտվում էր ամերիկացի փոփ-երգչուհի Արիանա Գրանդեի համերգը, որին ներկա էր մի քանի հազար մարդ, այդ թվում՝ մեծ թվով երեխաներ ու դեռահասներ:*

*Պայթյունի հետեւանքով 22 մարդ է զոհվել, շուրջ 60 մարդ հոսպիտալացվել է: Այն իրականացրել է մահապարտ ահաբեկիչը, որն իր հետ պայթուցիկ սարք էր բերել մարզադաշտ: «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը ստանձնել է բրիտանական Մանչեսթերում կատարված ահաբեկչական գործողության պատասխանատվությունը:*

ՈՒԿՐԱԻՆԱ-ԵՄ

### ԱՆԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՌԵԺԻՄԸ ԿԳՈՐԾԻ ՀՈՒՆԻՍԻ 10-ԻՑ

*Ուկրաինայի քաղաքացիների համար Եվրամիության այցեգրային ռեժիմի ազատականացումը կսկսի գործել հունիսի 10-ից: Այդ մասին ասված է ԵՄ-ի պաշտոնական հանդեսում, որտեղ հրապարակված է հանրակցության որոշումը:*

*«Այդ որոշումը ուժի մեջ կմտնի Եվրամիության պաշտոնական հանդեսում՝ դրա հրապարակման օրվանից 20 օր անց»,- նշված է փաստաթղթում:*

ԻՏԱԼԻԱ

### ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵՑ G7-Ի ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎԸ

*Սիցիլիայում աշխատանքը սկսեց Յոթի խմբի ղեկավարների գագաթաժողովը: Այս տարի այն անցկացվում է 43-րդ անգամ: Աշխարհի յոթ առավել զարգացած արդյունաբերական երկրների խումբը նախագահող Իտալիան գագաթաժողովի անցկացման վայր է ընտրել Տաորմինա ոչ մեծ քաղաքը, որը գտնվում է Սիցիլիա կղզում:*

*Ինչպես սպասվում է, Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, Իտալիայի, Կանադայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի եւ Ճապոնիայի ղեկավարները կքննարկեն արդի առավել սուր խնդիրները: Յոթ քաղաքական գործիչներից չորսի համար հանդիպումը առաջինը կլինի G7-ի ձեւաչափով: Խոսքը վերաբերում է ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփին, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնին, Մեծ Բրիտանիայի վարչապետ Թերեզա Մեյին եւ Իտալիայի վարչապետ Պաոլո Ջենտիլոնիին:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍՏԱՆ - ԹՈՒՐՔԻԱ

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱԶԱՆ ԴԱՐՁԱՎ ԲԱԶՄԱԿՈՂՄ



*Մայիսի 23-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմ: Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ հարաբերությունների խորացման եւ ռազմավարական համագործակցության հիմնական ուղղությունները:*

Հանդիպմանը կողմերն անդրադարձան նաեւ վրաց-ադրբեջանա-թուրքական համագործակցության եռակողմ ձեւաչափին, ընդգծվեց, որ այն նպաստում է քաղաքական երկխոսության խորացմանն ու տարբեր ոլորտներում համագործակցության զարգացմանը: Ընդգծվեց Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղային նախագծի իրացման հարցում սերտ համագործակցության կարեւորությունը:

Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմի, Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, երկու երկրների վարչապետերի նախագահությամբ անցկացվեց ռազմավարական համագործակցության նիստ, որին ներկա էին Վրաստանի կառավարության անդամները եւ Թուրքիայի պաշտոնական պատվիրակության ներկայացուցիչները: Պայմանավորվածությունների արդյունքում` ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր:

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Թուրքիայի վարչապետ Բինալի Յըլդըրըմի հանդիպմանը` կողմերը քննարկեցին տարածաշրջանային անվտանգության, երկկողմ համագործակցության եւ տնտեսական հարաբերությունների հետ առնչվող հարցեր: Հանդիպմանը Վրաստանի նախագահը շնորհակալություն հայտնեց թուրքական կողմին` Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության պաշտպանության համար:

ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔ

## ԻՐԱԿԼԻ ԿՈԲԱԽԻՁԵ. «ՄԵՆՔ ԿՍՏԱՆԱՆՔ ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ»




(Սկիզբը` 1-ին էջում)

թյան նախագծում նախագահական ընտրությունների կարգի ու մանդատների բաշխման հետ կապված:

Ըստ Իրակլի Կոբախիձեի, կոնսենսուսի կարող են հասնել քաղաքական ընդդիմության «արժանավայել վերաբերմունքի» դեպքում:

«Կոնսենսուսը հատկապես կարեւոր է, երբ խոսքը վերաբերում է երկրի Սահմանադրությանը, հիմնական օրենքին, սակայն դա կախված է բազմաթիվ գործոնների հետ, այդ թվում` քաղաքական սպեկտրը ինչքանով է հասունացել կոնսենսուսի համար: Մենք կփորձենք, գլխավորը, որ քաղաքական ընդդիմությունը ցույց տա պատշաճ վերաբերմունք: Այս դեպքում կոնսենսուս կստացվի: Մեր հիմնական խնդիրն է` ստեղծել մի փաստաթուղթ, որը կլինի լիովին համատեղելի իրավական սկզբունքների հետ, եւ որը կձեւավորի խորհրդարանական կառավարման շատ կատարյալ համակարգ»,- հայտարարել է խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն:

Իրակլի Կոբախիձեն, Բեռլինում գիտաժողովի ավարտից հետո, նույնպես ընդգծեց, որ վստահ է Վենետիկի հանձնաժողովի դրական գնահատականին:

«Վենետիկի հանձնաժողովի փորձագետները դիտարկումներ չեն կատարել` ընտրական համակարգի հետ կապված: Խորհրդատվությունները նրանց հետ այդ հարցի շուրջ շարունակվում են, եւ մենք վստահ ենք, որ կունենանք լիովին դրական եզրակացություն` այդ փաստաթղթի հետ կապված, ամբողջությամբ, այդ թվում` խորհրդարանական ընտրությունների համակարգի հետ կապված»,- ասաց Իրակլի Կոբախիձեն:

ՈԼՈՐՏ

## ԿԳՈՐԾԻ ԹԱՏՐՈՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՈՐ ՄՈԴԵԼ

*Մայիսի վերջին պատրաստ կլինի Վրաստանի թատրոնների ֆինանսավորման նոր մոդելը: Վրաստանի Մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Միխեիլ Գիորգաձեն հայտարարեց, որ նախարարության արվեստի վարչությունը շուտով սկսելու է քննարկել ֆինանսավորման նոր մոդելը:*

- Հաշվի առնելով միջազգային փորձը, հաստատված մոդելը կառաջարկվի Թբիլիսիի եւ տարածաշրջանների թատրոններին: Ես կարծում եմ, որ մենք կգանք ընդհանուր համաձայնության: Այս մոդելը կօգնի բարելավել նախարարության եւ թատրոնների հարաբերությունները,- ասաց Միխեիլ Գիորգաձեն: Նախարարը ցանկություն հայտնեց, այս հարցի վերաբերյալ անցկացնել հանրային բանավեճ, ներգրավելով ոլորտի մասնագետներին:

Ցանկանում ենք հիշեցնել, որ անցյալ ամիս մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարը նշեց, որ թատրոնների ղեկավարները միջոցներ չեն ձեռնարկում լրացուցիչ ֆինանսավորում ստանալու համար: Ըստ նրա, համաձայնության արդյունքում, նախատեսվում է ձեւավորել թատրոնների ֆինանսավորման նոր, արդյունավետ համակարգ:

ՏԱՐԵՐՔ

## ԿԱՐԿՈՒՏ ԵՎ ՓՈԹՈՐԿԱԼԻ ՔԱՄԻ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ



*Մայիսի 18-ին եւ 20-ին, Ախալքալաքիում եւ շրջակա գյուղերում ուժեղ քամի էր, եւ կարկուտ տեղաց: Գրեթե 10 րոպե տեղացող կարկուտը լուրջ վնաս է հասցրել գյուղատնտեսական ցանքատարածություններին:*

Կարկուտը վնասել է պտղատու այգիները, ծառերի ծաղիկները դեռ չբացված հողին են հավասարվել, տուժել են նաեւ բանջարանոցային կուլտուրաները, հացահատիկային մշակաբույսերը եւ այլն:

Կարծախ, Ֆիլիպովկա եւ Աբուլ գյուղերում, ուժեղ կարկտահարության ժամանակ, քամին քշել է տանիքներ:

Կարծախ գյուղում ուժեղ քամին մայիսի 20-ի երեկոյան քշել է 22 տան տանիք, Ֆիլիպովկա գյուղում վնասվել է երկու տուն, իսկ Աբուլ գյուղում քշել է 3 տան ու եկեղեցու տանիքը: Փոթորիկը Դադեշ գյուղում քշել էր 4 տան տանիք ու մասամբ վնասել գյուղի դպրոցի տանիքը:

Ուժեղ քամուց եւ կարկուտից տուժել են նաեւ Նինոծմինդայի մունիցիպալիտետի մի շարք բնակավայրեր, մասնավորապես, Գոնդուրա, Հեշտիա, Գանձա, Գորելովկա, Փոկա գյուղերի գյուղական տնտեսություններ:

* * *

Անձրեւներն ու կարկուտը առանձնակի մեծ վնասներ է հասցրել Աջարիայի, Սամեգրելոյի, Կախեթիի տարածաշրջանների տնտեսություններին:

## ՏԱՐԵՐԱՅԻՆ ԱՂԵՏԻՑ ՏՈՒԺԱԾՆԵՐԸ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՉԵՆ ՍՏԱՆԱ

*Ինչպես հայտարարեց Վրաստանի գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին, պետությունը ֆինանսական օգնություն չի ցուցաբերի գյուղական այն տնտեսություններին, որոնք տուժել են տարերային աղետից:*

Ինչպես նշեց նախարարը, տարերային աղետից ստացած վնասը կազմում է մի քանի միլիոն լարի, եւ պետությունը դա փոխհատուցելու հնարավորություն չունի: Հետեւաբար, գյուղի բնակիչները պետք է օգտվեն ագրոապահովագրության ծրագրից, որը, անհրաժեշտության դեպքում, կկարողանա փոխհատուցել վնասները` առանց բյուջետային միջոցների ընդգրկման: «Ոչ մի փոխհատուցում չի լինի, գործում է ագրոապահովագրության ծրագիր, եւ այդ պայմաններում սխալ է, երբ պետությունը մշտապես փոխհատուցում է տարերային աղետի վնասը: Դա ծանր բեռ է բյուջեի համար: Գյուղատնտեսությունում հարկ է իրականացնել ներդրումներ: Միանշանակ օգնությունը երբեք չի նպաստում ոլորտի զարգացմանը»,- հայտարարել է Լեւան Դավիթաշվիլին:



### ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ` ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

*Վրաստանում ներդրվում է «Ազգային պարգեւ` մանկավարժներին»: «Կրթությունը բոլորի համար-Վրաստան» ասոցիացիայի, ԿԳ նախարարության ու «Մանկավարժների մասնագիտական զարգացման ազգային կենտրոնի» միջեւ ձեւակերպվել է համագործակցության հուշագիր: «Ազգային պարգեւ` մանկավարժներին» The Global Teacher Prize քարոզարշավի բաղկացուցիչ մասն է եւ հետապնդում է լավագույն ուսուցչի բացահայտման, նրան հասարակայնությանը ներկայացնելու եւ ուսուցչի մասնագիտությունը ժողովրդականացնելու նպատակ:*

### ՄՈՐ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԸ ՊՐԻՄԱ ԲԱԼԵՐԻՆԱ Է

*Հարազատ մոր սպանության մեղադրանքով Թբիլիսիում ձերբակալված Անի Մուրադելին, մայրաքաղաքի Զ.Փալիաշվիլու անվան օպերայի եւ բալետի առաջատար մենապարուհի է:*

*Սպանությունից մեկ շաբաթ առաջ, Անի Մուրադելին օպերայի բեմում կատարել է առաջատար դեր, իսկ մայիսի 13-14-ին, «Գորդա» օպերայում, հանդես եկավ արեւելյան պարով: Տարածված տեղեկատվության համաձայն, ամուսնուց` Ռեզո Մաղալաշվիլուց, ճանաչված պարուսույց Նուկրի Մաղալաշվիլու որդուց բաժանվելուց հետո, Անի Մուրադելին ընկել է ալկոհոլային կախվածության մեջ:*

### 1,4 ԶԲՈՍԱՇՐՋԻԿ` ՎՐԱՍՏԱՆԻ ՄԵԿ ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ

*Բրիտանական «Telegraph»-ը հրապարակել է 51 երկրների ցանկը, որտեղ զբոսաշրջիկների թիվը գերազանցում է բնակչության թիվը: Այս ցուցակում Վրաստանը զբաղեցնում է 37-րդ տեղը: Ըստ հրապարակման տվյալների, Վրաստանում, մեկ բնակչի հաշվով` 1.4 զբոսաշրջիկ է գալիս:*

*Զբոսաշրջության ազգային ադմինիստրացիայում նշում են, որ «Telegraph»-ը հրապարակել է ցուցակ, որը հիմնված է 2015թ. վիճակագրական տվյալների վրա, երբ Վրաստան է այցելել 5,9 միլիոն զբոսաշրջիկ, իսկ 2016 թ. թիվն աճել է մինչ 6,3 մլն-ի:*

*«Telegraph»-ի վարկանիշում առաջին տեղում է Անդորրան, որտեղ մեկ շնչի հաշվով համընկնում է 33 զբոսաշրջիկ:*

### ՎԱԽՃԱՆՎԵԼ Է ՍՏԱԼԻՆԻ ԹՈՌԸ



*Մոսկվայում վախճանվել է Ստալինի թոռը` ռեժիսոր Ալեքսանդր Բուրդովսկին: Ռուսական բանակի Կենտրոնական ակադեմիական թատրոնի ռեժիսորը վախճանվեց սրտի անբավարարությունից:*

*75-ամյա Ալեքսանդր Բուրդովսկին Ստալինի կրտսեր որդու` Վասիլի Ստալինի ավագ որդին էր:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ
(26 մայիսի)

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.385 | 2.445 |
| ԵՎՐՈ | 2.65 | 2.768 |
| ՌՈՒԲԼԻ | 0.04 | 0.047 |
| ԴՐԱՄ | 0.0038 | 0.0054 |

*Մայիսի 19-ի համեմատ, դոլարի կուրսը նվազել է 0.01 լարիով:*

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՔԵԹԵՎԱՆ ԾԻԽԵԼԱՇՎԻԼԻ. «ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՎԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է»

*«Պետական լեզվի՝ վրացերենի իմացության մակարդակի բարձրացումն ու զարգացումը պետության գլխավոր առաջնահերթություններից մեկն է»:*

Այդ մասին հայտարարեց Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, միջգերատեսչական հանձնաժողովի հատուկ նիստում:



«Ազգային փոքրամասնության ներկայացուցիչների կողմից պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացումը պետության համար ամենանշանակալի առաջնահերթություններից մեկն է եւ այդ մոտեցումը առավել համակարգային տեսք կընդունի: Պետական լեզվի տիրապետումը մեր քաղաքացիների համար հաջողության, իրավահավասարության, կյանքի տարբեր ոլորտներում լիարժեք ներգրավման հնարավորության եւ իրական քաղաքացիական ինտեգրման դուռն է: Այսօր հանձնաժողովը հավաքվել է, որպեսզի այդ հարցն է՛լ ավելի բարձր մակարդակի հասցնի, առավել առաջնահերթային խնդիր համարի եւ իրականացնի քաղաքական համակարգում, ինչը կհանգեցնի առավել էական ու արդյունավետ արդյունքի: Վերջին տարիներին, պետական լեզվի իմացության տեսանկյունից, իրավիճակը նկատելիորեն բարելավվել է, թեպետ մեր շատ քաղաքացիներ դեռեւս լիարժեք չեն տիրապետում պետական լեզվին: Մենք այդ ուղղությամբ աշխատանքները կակտիվացնենք տարբեր գերատեսչությունների ներգրավմամբ»,- հայտարարեց պետնախարարը:

Միջգերատեսչական հանձնաժողովը, իր հատուկ նիստում քննարկեց նաեւ ազգային փոքրամասնությունների համար մայրենի լեզվի որակյալ ուսուցման հնարավորությունների ու արդյունավետության ավելացման հարցը:

Միջգերատեսչական հանձնաժողովը քննարկեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական ռազմավարության շրջանակներում ընթացիկ ծրագրերն ու նախագծերը, առանձնակի ուշադրություն հատկացվեց աբխազական լեզվի պաշտպանության եւ զարգացման հարցերին:

Պետական միջգերատեսչական հանձնաժողովի նիստին մասնակցում էին կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին, պետական այլ գերատեսչությունների, բուհերի ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԽՈՐԱՑՄԱՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կա խնդիրները: Կոնֆերանսի առաջին հատվածում՝ «Հայաստան-Վրաստան քաղաքացիական հասարակություն» խորագրի ներքո ելույթ ունեցավ Ժողովրդավարության զարգացման կենտրոնի տնօրեն Վլադիմիր Բոժաձեն:



Նա ներկայացրեց Վրաստանում քաղհասարակության ձեւավորման նախապատմությունը:

Ելույթ ունեցան նաեւ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի տնօրեն Արթուր Սաքունցը, «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի» ղեկավար Աշոտ Մելիքյանը, Թբիլիսիում «ԱԼԻՔ ՄԵԴԻԱՅԻ» հիմնադիր Արսեն Խառատյանը, «Բազմազգ Վրաստան» շարժման ղեկավար Առնոլդ Ստեփանյանը, «Եզդիների տուն» կազմակերպության տնօրեն Ագիտ Միրզոեւը, Վրաստանում տարածաշրջանային անվտանգության Կովկասյան ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Ռուսեցկին, Վրաստանի «Խաղաղության հիմնադրամի» ՀԿ նախագահ Գիորգի Թումասյանը:

*ԱՐՄԵՆՊՐԵՍ-«ՎՐԱՍՏԱՆ»*

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԿԱԶՄՎԵՑ ՎՐԱՍՏԱՆԻ ԿՐՈՆՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԸ

## ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ 2.94 ՏՈԿՈՍԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԵՏԵՎՈՐԴՆԵՐ ԵՆ

*Վրաստանում առաջին անգամ կազմվում են քարտեզներ, որոնք ցուցադրում են երկրի ողջ տարածքով քաղաքացիների կրոնական կառույցները, ինչպես նաեւ նշում են կրոնական տեսարժան վայրերը:*

Մայիսի 24-ին, Թբիլիսիում անցկացվեց կրոնական քարտեզների շնորհանդես: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի կրոնական համայնքների ներկայացուցիչներ, կառավարության եւ խորհրդարանի անդամներ, հյուրեր:



Միջոցառումը բացեց Կրոնի հարցերով պետական գործակալության տնօրեն Զազա Վաշաղմաձեն: Իր խոսքում, նա առանձնակի ընդգծեց Վրաստանի կրոնական քարտեզի ստեղծման կարեւորությունը եւ այդ նախագծի բացառիկությունը: «Վրաստանի պատմության մեջ նման քարտեզ մշակվել է առաջին անգամ: Այդ ամենը կնպաստի միջկրոնական համագործակցությանը եւ, ամենակարեւորը, կմեծացնի Վրաստանի զբոսաշրջության ներուժը»,- հայտարարեց Զազա Վաշաղմաձեն:

Քարտեզները մշակվել են Կրոնի հարցերով պետական գործակալության կողմից: Այն կազմել է գործակալությանն առընթեր կրոնական քաղաքականության հետազոտման կենտրոնը, ելնելով Վրաստանի վիճակագրական ծառայության 2014 թվականի տվյալներից: Այդ տվյալների համաձայն, Վրաստանի 3,7 միլիոն բնակիչներից 83,4 տոկոսը հետեւում է ուղղափառության դավանանքին: Նրանց հաջորդում են մահմեդականները՝ 10,74 տոկոս: Երրորդ տեղում 2,94 տոկոսով հայկական Առաքելական եկեղեցու հետեւորդներն են: Վրաստանում Կաթոլիկ եկեղեցու հավատացյալները կազմում են բնակչության 0,52 տոկոսը, Եհովայի վկաները՝ 0,33, եզդիները՝ 0,23, հրեաները՝ 0,04 տոկոս: «Այլնի» սանդղակում ընդգրկվել է բնակչության 1,8 տոկոսը, այդ թվում՝ այն մարդիկ, ովքեր հրաժարվել են պատասխանել հարցին կամ հանդիսանում են առավել փոքր կոնֆեսիաների ներկայացուցիչներ:

Ընդհանուր առմամբ, կազմվել է երեք քարտեզ՝ տարածաշրջանային, շրջանային եւ պաշտամունքային կառույցների: Այդ քարտեզները մատչելի են կրոնի հարցերով գործակալության կայքում:

Այն ժամանակ, երբ տարածաշրջանային եւ շրջանային քարտեզները իրազեկում են Վրաստանի բնակչության կրոնական պատկանելության մասին, ապա «Պաշտամունքային կառույցներ» քարտեզներում ներկայացված են երկրի տարածքում գտնվող մենաստանները, եկեղեցիներն ու մզկիթները: Նախագծի հեղինակները համոզված են, որ այդ քարտեզներից գխավորապես կօգտվեն զբոսաշրջիկները:

Նշենք, որ «Պաշտամունքային կառույցներ» քարտեզները կազմված են 3D ձեւաչափում: Հետեւաբար, մատչելի են միայն էլեկտրոնային տեսքով, այն ժամանակ, երբ տարածաշրջանային եւ շրջանային քարտեզները տպագիր են:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ՏԱԳՆԱՊԱԼԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԵՐԿՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՎԱԶԵԼ Է 0,1 ՏՈԿՈՍՈՎ

*Ինչպես տեղեկացրել է վիճակագրության ազգային ծառայությունը, 2016 թվականին երկրից հեռացել է շուրջ 98,3 հազար մարդ, ինչը 2,4 տոկոսով գերազանցում է 2015 թվականի ցուցանիշը: «Նույն ժամանակահատվածում ներգաղթողների թիվը, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել է 2,5 տոկոսով եւ կազմել 90,2 հազար մարդ: Արդյունքում, 2016 թվականին արտագաղթի եւ ներգաղթի տարբերությունը կազմել է 8,1 հազար մարդ»,- ասված է ծառայության հաղորդագրությունում:*



Ինչ վերաբերում է Վրաստանի բնակչության թվաքանակին, ապա, վիճակագրական ծառայության տվյալներով, 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Վրաստանում ապրում է 3 միլիոն 718,2 հազար մարդ, ինչը 0,1 տոկոսով զիջում է նախորդ տարվա ցուցանիշին: 2016 թվականին բնակչության թվի նվազեցման վրա ազդեցություն են գործել բնական աճի եւ արտագաղթի բացասական հանգամանքները:

Վիճակագրական տվյալների համաձայն, երկրի բնակչության 57,2 տոկոսը (2 միլիոն 128,6 հազար մարդ) ապրում է քաղաքներում, իսկ 42,8 տոկոսը (1 միլիոն 589,6 հազար մարդ)՝ գյուղերում: Երկրի բնակչության 47,9 տոկոսը տղամարդ է, իսկ 52,1 տոկոսը՝ կին, թեպետ, անցյալ տարվա համեմատ, տղամարդկանց թիվը 0,1 տոկոսով ավելացել է, իսկ կանանց թիվը՝ 0,2 տոկոսով նվազել:

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ, 0-ից 14 տարեկան բնակիչների թիվը կազմում է ընդհանուր թվաքանակի 19,5, իսկ 15-ից 64 տարեկան աշխատունակ բնակչության թիվը՝ 66,1 տոկոս: 65 եւ ավելի տարիքի բնակչությունը, ընդհանուր թվաքանակի մեջ, կազմում է 14,5 տոկոս:

0-ից 14 տարեկան տղամարդկանց թիվը գերազանցում է համապատասխան տարիքի կանանց թվին, թեպետ 65 եւ ավելի տարիքային խմբում վավերացված է հակառակ միտումը, ինչը պայմանավորված է կանանց նկատմամբ տղամարդկանց համեմատաբար ցածր կյանքի տեւողությամբ:

2016 թվականի վիճակագրական տվյալներով, կյանքի միջին տեւողությունը կազմում է 72,7 տարի, այդ թվում՝ կյանքի միջին տեւողությունը տղամարդկանց մոտ վավերացվել է 68,3, իսկ կանանց մոտ՝ 77,2 տարի:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*